ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 127-Ա « 13 » հունվարի 2026 թ.

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՐԱՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.27 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի հ. Ն/77172-25 ծանուցումը, ինչպես նաև Սուսաննա Սարգսյանի հետ 2021 թվականի հունվարի 14-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Սուսաննա Հրանտի Սարգսյանին՝ 2026 թվականի հունվարի 15-ից ազատել «Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան հ.27 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի հունվարի 14-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան հ.27 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Լիլիյա Օհանյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ